

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 5/12

Քաղ. Երեւան

28 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) 2012թ. փետրվարի 28-ի նիստում (արձանագրություն N 2.3) քննարկեց «MARKANT Handels –und Service GmbH» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2012թ. հունվարի 31-ին ներկայացված «OMEGA» (միջազգային գրանցման համարը N IR 1017465) համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը ՀՀ տարածքի վրա տարածելը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա», 106-րդ կետի 1-ին մասի «ա» ենթակետերի, 115-րդ կետ 1-ին եթակետը, 116-րդ կետի 1-ին ենթակետը, 125-րդ կետի 2-րդ ենթակետը համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին գուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «OMEGA» (OMEGA SA (OMEGA AG) (OMEGA LTD) IR 614933, 631797) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով, քանի որ

հայտարկված նշանի հիմնական ընկալման տարր հանդիսացող «OMEGA» բառը հանդիսանում է գրանցված ապրանքային նշան:

Բողոքում նշված է, որ 2011թ. նոյեմբերի 7-ին Մտավոր սեփականության գործակալության «Ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների» բաժնի կողմից կայացվել է վերոնշյալ ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշումը, համաձայն որի նախնական մերժման մասին որոշումը մնում է անփոփոխ:

«Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» ՀՀ կարգի 108-րդ կետի համաձայն, հայտատուն բողոքին կից ներկայացնում է նամակ-համաձայնագիրը (OMEGA SA (OMEGA AG)) ընկերությունից, որը հանդիսանում է N614933 և N631797 միջազգային գրանցումների իրավատերը, որում նշված է, որ տալիս է իր համաձայնությունը «MARKANT Hadeles- und Service-GmbH» ընկերությանը՝ N IR1017465 ապրանքային նշանի միջազգային գրանցման գործողությունը, ԱԾՄԴ 29-րդ, 30-րդ և 32-րդ դասերի հայտարկված բոլոր ապրանքների համար, ՀՀ-ում տարածելու վերաբերյալ:

Ամփոփելով իր միտքը՝ բողոքարկողը խնդրում է վերանայել միջազգային հայտ N IR 1017465 «OMEGA» ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հունվարի 31-ին քննարկման է ներկայացվել «MARKANT Handels-und Service GmbH» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից ներկայացված «OMEGA» (հայտի համարը N 1017465) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքը:

Նշվեց նաև, որ կոլեգիայի կարծիքով հայտարկված և հակադրված ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են և «OMEGA» ապրանքային նշանի միջազգային գրանցման (IR 1017465) տարածումը ՀՀ տարածքի վրա մերժելու մասին գործակալության որոշումը, դրա կայացման թվականի դրությամբ օրինական էր և կոլեգիայի կարծիքով այն չեղյալ ճանաչման ենթակա չէ: Սակայն հաշվի առնելով երևան եկած նոր հանգամանքները, այն է՝ շվեյցարական OMEGA SA (OMEGA AG) ընկերության կողմից տրված նամակ-համաձայնագիրը, համաձայն որի շվեյցարական OMEGA SA (OMEGA AG) ընկերությունն իր համաձայնությունն է հայտնել առ այն, որ «MARKANT Hadeles- und Service-GmbH» ընկերությանը կարող է ՀՀ-ում գրանցել և օգտագործել է «OMEGA» (միջազգային գրանցման համարը N 1017465) համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 29-րդ, 30-րդ և 32-րդ դասերի հայտարկված բոլոր ապրանքների համար, կոլեգիայի անդամը առաջարկեց բողոքը բավարարել: Միննույն ժամանակ, ղեկավարվելով «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի դրույթներով կոլեգիայի անդամը առաջարկեց վերը հիշատակված որոշումը ուժը կորցրած ճանաչել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«MARKANT Hadeles- und Service-GmbH» ընկերության բողոքը բավարարել ամբողջությամբ, ուժը կորցրած ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը և գրանցել «OMEGA» (միջազգային գրանցման համարը N IR 1017465) համակցված ապրանքային նշանը ԱԾՄԴ 29-րդ, 30-րդ, 32-րդ դասերի հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան